

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 282

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 2:—**Պրակները՝** 1:—**Մեծությունը՝** 37.5×24.3 սմ.:—**Նյութը՝** դեղնած և մաշված բարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1բ—2բ:—**Տողերը՝** 2 տպագիր և 23 ձեռագիր:—**Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** չունի: Կոնդակի վերևի կենտրոնում կան միայն իրար կապված երկու ճյուղեր, որոնք տպված են: Այս երկու ճյուղերի մեջ կա Հայրապետական կնիքը, 4 սմ. տրամագծով, որի կենտրոնում նկարված է Քրիստոսը, իսկ կնիքի շրջանակում գրված է հետևյալը.—«Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Մկրտիչ Կաթողիկոս Հայոց Տանն Կիլիկիոյ յամի ՌՅԻ»:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Սսի Մկրտիչ Քեֆսիզյան մարաշցի Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո (1871—1894 թթ.):—**Ժամանակը՝** 29 մայիսի 1883 թ.:—**Վայրը՝** Սիս (Կիլիկիա):—**Ծանոթություն՝** սույն կոնդակը ստացված է նվեր արտասահմանից ձեռամբ Վեհափառ Հայրապետի 1965 թ. փետրվար ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—(Տպագիր) Մկրտիչ Ա Ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Կաթողիկոս (վերջին այս բառը գրված է առանձին երեք սանտիմետր վերևում բուն տողից) և Ծ. Պատրիարք և Եպիսկոպոսապետ Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ:

(Ձեռագիր) Յորմէ ողջոյն Աստուածային և Առաքելական օրհնութիւն առ Մեծապատիւ Յակոբ Էֆէնտի Նալպանտեան բարեջան Աթոռային Երիցփոխան Սսոյ, բարեպաշտ սիրեցեալն մեր ի Տէր:

Աստուած փառաց և Հայր ողորմութեանց եղիցի ընդ քեզ միշտ Ամէն:

Եւ ընդ Տիրաշնորհ Ս. ողջունիս և Աստուածապարգև օրհնութեան յանձն առնելով Քեզ բարեպաշտիդ զպաշտօն Աթոռային Երիցփոխանութեան Սսոյ պատուէր տամք զի մի խնայեսցես զՔոյդ փութաջան աշխատութեան սակս պայծառութեան Սրբոյ Աթոռոյս, քանզի Քեզ է անկ զի հին աւուրց կանոնեալ տուրս և իրաւունս Ս. Աթոռոյս պահանջել և առնուլ ի պաշտօնէից Ս. Եկեղեցեաց տեղւոյդ, և ջանալ ընդ միշտ ի գիւտ նորանոր եկամտից յանուն Ս. Աթոռոյս, և ըստ պահանջման պաշտօնիդ տեղեկագրել և համարս տալ առ մեզ:

Արդ, յուսադիր լեալ ի Քոյդ գործունէութիւն ի ձեռն սոյն օրհնաձիր կոնդակիս հաստատեմք զՔոյին նորընդունակ պաշտօն Աթոռային Երիցփոխանութեան Սսոյ, և ոյր սակս կարողութիւն մաղթեմք Քեզ ի Տեառնէ:

Տէր Յիսուս, որ գիտէ վարձահատոյց լինել կամակատար ծառայից իւրոց. ի հաճոյս իւր ընկալցի

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից և 1971 թվականի №№ Ե—Ը-ից:

և զՔոյդ անձնուէր ծառայութիւնն. և բարեաւ յաջողեսցէ զամենայն բարենպատակ ձեռնարկս և գործս Քոյ:

Ողջ լեր միշտ ի խնամս Տեառն Աստծոյ բարձրելոյ:

Խ. Մկրտիչ Ա, վարդապետ Սրբոյ Երուսաղէմի,
Եպիսկոպոս Էջմիածնի և Կաթողիկոս Կիլիկիոյ:

Գրեցաւ ի 29 մայիսի 1883 ամի Տեառն
և յԱզգային թուականի 4375,
ի Ս. Աթոռ Կիլիկիոյ, որ ի Սիս:
Թիւ Կոնդակի 344:

№ 283

ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔ

(Հաբեշերեն)

Թերթերը՝ 142:—**Պրակները՝** 16: Առաջին վեց (Ա—Զ) պրակները 10-ական թերթ են, հաջորդ ինը (Է—ԺԵ) պրակները՝ 8-ական, իսկ վերջինն էլ (ԺԶ) 6 թերթ են:—**Մեծությունը՝** 16.2×10.7×6.7 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված: Ձեռագիրը դրված է դեղնավուն կաշյա մի կոշտ տոպրակի մեջ:—**Պահպանակները՝** սկզբում և վերջում կան երկուական թերթ դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 2ա, 2բ, 141բ, 142ա և 142բ:—**Տողերը՝** 22—24:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** ամհարական հաբեշերեն (սեմական լեզու):—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի սակավաթիվ և շատ հասարակ զարդագրություն: Օգտագործված է միայն սև և կարմիր թանաքները: Վերնագրերն և երբեմն էլ սկզբնատառները գրված են կարմիր թանաքով: Ձեռագրում կան երկու հատ շատ հասարակ խորաններ (թթ. 3ա և 128ա), որտեղ նկարված են դիմագիծ, աչք, խաչ և այլն: Կա մի հատ փոքրիկ խաչ (թ. 58ա) և չորս հատ էլ գլխազարդեր (թթ. 76ա, 111ա, 121բ և 137բ): Մի քանի տեղ կան սևով կարմիր գծեր:—**Կարված թերթերը՝** 29, 68, 84, 89, 116 և 132:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** շատ հավանաբար նույն ինքը գրիչն է:—**Ժամանակը՝** ԺԶ—ԺԷ դարեր:—**Վայրը՝** Եթովպիա:—**Ծանոթություն՝** սույն մագաղաթյա ձեռագիրը 1965 թ. հունվար ամսին գնված է Ադիս-Աբեբայում և Մայր Աթոռ է բերված Վեհափառ Հայրապետի ձեռամբ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տեսնել թ. 141ա-ում:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսնել թթ. 2բ, 8ա, 37բ, 48ա, 73բ, 89բ, 91ա, 109ա, 139բ և 142ա-ում:

№ 284

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 12:—**Պրակները՝** 1 (հանդիսանում է մի դեղեցիկ ձեռագրից պոկված մի պրակը):—**Մեծությունը՝** 17.5×12.5×0.5 սմ.:—**Նյութը՝** մաքուր, բարակ, սպիտակ մագաղաթ:—**Կազմը՝** հաստ ստվարաթուղթ, ծածկված մոխրաթով և թղթով: Կազմի առաջին երեսի կենտրոնում կպցված է, 2.3×2.3 սմ. չափերով, փշե պսակ ունեցող Հիսուսի գլուխը:—**Պահպանակները՝** սկզբում և վերջում երկուական թերթ հասարակ թուղթ:—**Վիճակը՝** լավ, թեպետև գեղեցիկ մի ձեռագրի մի մասն է միայն:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** 1բ, 4ա, 5ա, 8բ և 12ա:—**Տողերը՝** 25:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** սույն ձեռագիրը, թեպետև պակասավոր, սակայն մի հիանալի նմուշ է հայկական մանրանկարչության: Ունի հինգ հատ ամբողջական էջի ծավալով սրբանկարներ Հիսուսի կյանքից, բազմաթիվ գեղեցիկ լուսանցազարդեր, սրբեր, անհատներ և թագավորներ, սիրուն ծաղիկներ, ծառեր և թռչնագրեր: Հատկապես գեղեցիկ է իշու վրա նստած Հիսուսի փախուստը Երուսաղեմից իր մոր և հոր հետ (թ. 10բ):—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԵ—ԺԶ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** ձեռագիրն ստացված է նվեր փարիզաբնակ պրն. Դավիթ Մանուշյանից 1965 թ. փետրվար ամսին: Այն բերված է Մայր Աթոռ Վեհափառ Հայրապետի ձեռամբ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագրի վերջում գտնվող թղթյա պահպանակի առաջին թերթում).

Ակնոյ Կամարակապ գիւղացի փարիզաբնակ պրն. Դաւիթ Մանուշեան Ս. Էջմիածնին կը նուիրէ այս ձեռագիրը ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա կաթողիկոսի Ամենայն Հայոց, ի յիշատակ իւր նահատակ ննջեցելոց:

2 փետրուար 1965, Փարիզ:

№ 285

ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 378:—**Պրակները՝** 28, յուրաքանչյուրը 14-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակներից.—Ժ՝ 8, ԻԵ՝ 11, Ա, Բ, ԻԶ՝ 12, ԻԷ և ԻԸ՝ 15 թերթ:—**Մեծությունը՝** 13.8×10.8×5.8 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով նկարված են սիրուն զարդեր: Կազմի երկու բռնիչները ընկել են:—**Պահպանակները՝** սկզբում կա երկու թերթ հասարակ թուղթ:—**Վիճակը՝** բավարար: Տեղ-տեղ չարագործ մի ձեռք կտրատել է որոշ թերթերի մասեր:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթերը՝** 131բ:—**Տողերը՝** 21:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր: Ամբողջ ձեռագրում օգտագործված են հայկական խազերը:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի շատ սիրուն մանրանկարչություն: Կա երկու հատ գեղեցիկ խորաններ (թթ. 1ա և 132ա), ութ հատ գլխազարդեր (թթ. 10բ, 53բ, 103բ, 181ա, 232ա, 289բ,

312ա և 338բ) և բազմաթիվ լուսանցազարդեր և գըմբեթներ, խաչեր և զարդեր, ծառեր և ծաղիկներ, թռչուններ և այլն: Կան բազմաթիվ սիրուն թռչնագրեր և զարդագրեր, մի հատ մարդագլուխ զարդագիր (թ. 235բ) և Աստվածածնի նկարը (թ. 224բ):—**Գրիչը՝** Հովհաննես նկարող:—**Պատվիրատուները՝** Մկրտիչ աբեղա և իր եղբայրը Ծառուկ:—**Ծաղկողը՝** նույն ինքը գրիչն է:—**Ժամանակը՝** 1480 թ.:—**Վայրը՝** Կեսարիա:—**Մանոթություն՝** սույն ձեռագիրը 1965 թ. փետրվարին ստացված է նվեր լոնդոնաբնակ տիկին Ատրինե Քեչեճյանից: Մատյանը Մայր Աթոռ ս. Էջմիածին է բերված ձեռամբ Վեհափառ Հայրապետի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 31բ.—Մայր Աստուծոյ Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածին. և ես մեղաւոր գրիչս Յովանէս. խնդրեմ ի քէն կողկողագին պաղատանաւք բարեխաւսել առ միածին քո որդին ի յաներեկ աւուրն:

Թ. 53ա.—Զմեղաւք զառաձեալ գրիչս զՅովանէս հանդերձ ծնաւղաւք և ամենայն զարմիւք. յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ ամէն:

Թ. 180բ.—Զմեղաւք դատապարտեալ գրիչս զՅովանէս յիշեցէք ի Քրիստոս, և մեղաց թողութիւն հայցեցէք յառատաձիր պարգևողէն:

Թ. 219ա.—Եւ ինձ անարժանիս ողորմեա Տէր լսել զերանական զձայն:

Թ. 323ա.—Ընդ աւազակին և զմեզ արժանի արայ Տէր ի միւս անգամ քո գալստեանն:

Թ. 338ա.—Ընդ նոսին և զիս զանարժան գրիչս զՅովանէս և զծնաւղսն իմ արժանի արայ Տէր քոյին սուրբ արքայութեանդ, և մի անտես առներ զմեզ:

Թ. 360բ.—Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր, և Որդւոյ, և Սուրբ Հոգւոյն, ամմէն:

Արդ գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի շարակնոց, այսինքն շարեալ ակունք, ի լաւ և յընտիր աւրինակէ, որ ասի խլուպապու, որ է յընկեալ և յընտակեալ առաջին վարդապետացն և վարժապետացն, ձեռամբ Յովաննէս նկարողի և քարտուղարի, ի յերկիրս Կեսարու, որ ասի Ղայսարիա, ի թվականիս հայոց յամի յինն հարիւր և ԻԸ (1480 թ.): Արդ որք հանդիպիք ամայ ուսմամբ կամ աւրինակելով, յիշեսջիք զգծողս սորա զՅովաննէս միով Տէր ողորմայի, որ և ձեզ լիցի ողորմութիւն յամէնողորմ արարչէն, ամէն:

Եւ դարձեալ յիշեսջիք ի Տէր զդեռաբոյս կրաւնաւորն զՄկրտիչն և զեղբայրն իւր զԾառուկն, որ ստացան զգիրքս զայս հալալ և արդար՝ արդեամբք և ընչիւք ծնողացն իւրեանց: Ի վայելումն Մկրտիչ աբեղին և յիշատակ ծնողաց իւրոց Սարգսին և Գարանէ, և իւր եղբաւրն Ծառուկին, և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն եղիցի եղիցի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 377բ.—1479-ին գրուած ի Կեսարիա:

Թ. 378ա.—Յիշատակ է շարակնոցն մահտեսի Սարգիսին և իւր կողակցին Ղօնեայ, ի դուռն Սուրբ Աստուածածնա ԹԸ. ՌԺԺԲ (1663) ամեն:

Թ. 378բ.—Տիկին Ատրինէ Քեչեչյան, Լոնտոն. Ա-վետարան, 1479, նվեր Մայր Աթոռին:

№ 286

ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 329:—**Պրակները՝** 30, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակներից.—Լ՝ 6, Ա և ԻԷ՝ 7, Բ, Ը, Թ, ԺԴ, ԺԶ և Ի՝ 10, Գ, Դ, Է, ԺԱ և ԺԵ՝ 11, ԻԹ՝ 15 թերթից են:—**Մեծությունը՝** 13×9.1×6.3 սմ.:**Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ: Կաշվի վրա ժամանակին ճնշումով զարդեր են նկարված, սակայն հետագայում կաշվի մեծ մասը պոկվել է: Կազմի երկու բռնիչները ընկել են:—**Պահպանակները՝** սկզբում մեկ թերթ հասարակ թուղթ:—**Վիճակը՝** բավարար, սակայն տեղ-տեղ որոշ թերթեր պակասում են:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չկան:—**Տողերը՝** 22—23:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր: Ամբողջ ձեռագրում օգտագործված են հայկական խազերը:—**Զարդագրությունը՝** ձեռագիրն ունի միջին որակի մանրանկարչություն: Մատյանում կա վեց հատ գըլխազարդ, բազմաթիվ լուսանցազարդեր, ձկներ, թռչուններ, խաչեր և գմբեթներ: Կան նաև բազմաթիվ սիրուն զարդագրեր և թռչնագրեր:—**Գրիչը՝** Մովսես քահանա:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1528 թ.:—**Վայրը՝** անհայտ:—**Մանոթություն՝** Աղեքսանդրիո (Եգիպտոս) հայ գաղութը Կահիրեի հնություններին մի խանութից հիսուն ոսկով գնելով սույն ձեռագիրը նվիրում է Մայր Աթոռի Ձեռագրատան: Գնումը կատարված է Վրաստանի թեմի առաջնորդ գերաշնորհ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանի և Կահիրեի բնակիչ ոսկերիչ պրն. Օհանիկ Ալեքսանյանի ձեռամբ: Սույն արժեքավոր ձեռագիրը Էջմիածին է բերված Վեհափառ Հայրապետի միջոցով 1965 թ. փետրվար ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 83բ.—Յիշեցէք զմեղուցեալ ծառայս ի բարի մասն:

Թ. 319ա.—Փառք ամենայն Սուրբ Երրորդութեանն և մի աստուածութեանն Հաւր և Որդոյ և հոգոյն Սըրբոյ ամէն: Արդ գրեցաւ շարակնոցս ձեռամբ յոգնամեղ և անպիտան գծագրողիս անարժան Մովսէս քահանայիս, ի թվաբերութեանս հայոց ՋՀՋ (1528 թ.), ի հայրապետութեան Տէր Յովաննէսին, ի թագաւորութեան Սուլայմանին, որ գնաց ի վերայ Փռանգին. ի դառն և տխուր ժամանակի գրուեցաւ այս շարակնոցս:

Խնդրեմ ի ձիզանէ զի յոյժ նեղացեալ ենք գրոյս սխալանաց և խոշորութեան անմեղադիր լերուք, զի այս չափ կար մեր, և որ յիշէ զմեզ Քրիստոս զինքն յիշէ իւր Սուրբ արքայութիւն ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 83բ.—Ղարիպի և դեռանէող լալի:
այրականք դառն ու լեղի
ի Տրտ:

Թ. 235բ.—Միսաք աղա:
Թ. 329ա.—Փառք ամենայն Սուրբ Երրորդութեան Հաւր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, յաւիտեանս ամէն:

Զվերջին կազմող շարակնոցիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ըզխարբերդցի Սիմոն աբեղան: Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զնորահարս Ստեփանոս քահանայն, և զիւր կողակիցն զՄարիամն, և զորդին զՄանուէլն, և զդուստն զՄրճանն և զմիուսն զԽաթուն, և զհայրն զԱկովբն, և զմայրն զՄրճանն և զիւր մեծ պապն զՏէր Յովանէս քահանայն, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, մեզ և ձեզ ողորմեսցի իւր միուս անկամ գալուստն ամէն:

Ի թվին հայոց ՌԾԹ, աւրհնեալ է Աստուած յաւիտեանս ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Մոցիտիկնա, մոցի տիկնացն:

(Ձեռագրի վերջում կա մի քարտ, որ հայտարարությունն է այն խանութին, որտեղից գնված է սույն ձեռագիրը: Գրված է տպագիր հետևյալ անունը՝ J Khawam et Co., Khan Khalili, Cairo, Egypt. ապա տպված է խանութում վաճառված գլխավոր հնությունների մի ցուցակ):

(Քարտի ներսում ձեռագիր գրված է հետևյալը).

Շարակնոց ՌԾԹ. խարբերդցի Սիմոն Աբեղա վերջին կազմողը. 1059+552=1611:

1965 թվի հունվարի 14-ին Աղեքսանդրիո հայ գաղութը գնեց հիսուն ոսկի խարբերդցի Սիմոն Աբեղայի կազմած Շարակնոցը ձեռագիր և նվիրեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի գրադարանին ակնեղենի մեծ վաճառական Օննիկ Ալիքսանյանի և Կոմիտաս եպիսկոպոսի, այս թղթի վրա եղած հաստեղ խանութից:

Կոմիտաս եպիսկոպոս

14-1-65 թ. Գահիրէ:

№ 287

ՀՄԱՅԻԼ

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 322×10.3 սմ., ինչպես նաև բնագրից կտրված չորս հատ մանր կտորներ, ընդամենը 45 սմ. երկարությամբ:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստարակ թուղթ:—**Կազմը՝** կաշյա մի գրպանիկ, 13.6×13.6 սմ. չափերով, որի վրա նախշեր են նկարված: Հետագայում կաշյա սույն գրպանիկի համար հաստարակ շորից կարված է մի երկրորդ գրպանիկ 20.3×15.1 սմ. չափերով:—**Վիճակը՝** անբավարար:—**Գրությունը՝** միապույն:—**Գծումները՝** առանց ճնշումի:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** սույն հմայիլն ունի շատ հաստարակ մանրանկարչություն: Կան հետևյալ նկարները՝ Ս. Գաբրիել հրեշտակապետ, ս. Կիպրիանոս եպիսկոպոս, ս. Սարգիս զորավար և մի հատ էլ մեծ և հաստ խաչ: Սրանցից բացի հմայիլն ունի հաստարակ ոճով նկարված չորս հատ զարդագրեր, չորս հատ թռչնագրեր և յոթ հատ գլխազարդեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուները՝** Դահուտ և Շահզատ:—**Ծաղկողը՝** շատ հավանաբար նույն ինքը գրիչն է:—**Ժամանակը՝** ԺԸ դար:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** Մայր Աթոռիս Ձեռագրատունը սույն հմայիլը ստացած է նվեր մի անհայտ բարեպաշտից, 1965 թ. մայիսի 14-ին, ձեռամբ Մայր տաճարի թանգարանի վարիչ հոգեշնորհ տ. Գևորգ աբեղա Սերայտարյանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զանազան աղոթքներ բժշկության մասին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

...ի ծառայս Աստուծոյ Շահզատ, Մինայի դուստր, և իր դըստերացն Մըլուք (և) Ֆրիադ:

...զծառայս Աստուծոյ Դահուտին, Մինային որդոյն:

...ի ծառայէս Աստուծոյ անուն Հաւր, և Որդոյ, և Հոգոյն Սրբոյ ամէն, եղիցի, եղիցի Դահուտին, Մինայի որդոյն:

...զծառայս Աստուծոյ Դահուտին, Մինայի որդոյն և իր կողակցին զա...:

...ի ծառայէս Աստուծոյ Դահուտին և Շահզատ իր կողակցին:

...Եւ զզաւրութեամբ սոցա պահապան լիցի ծառայիս Աստուծոյ Դահուտին և իր կողակցին Շահզատ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցօվանէսին (յոթ անգամ):
Որդոյն մախսուտին (երեք անգամ):
Նըշօին (մատիտով—վեց անգամ):
Եղիցի պահապան ծառայիս Աստուծոյ Ցօվանէսին (երկու անգամ):
Եղիցի պահապան ծառայիս Աստուծոյ Նըշօին (մատիտով—երկու անգամ):

(Հմայիլի կոնակի մասում)

Ա Բ Գ Դ Ե Զ . . . . . (գրչափորձ) 2 հատ:

(Հետագայում հմայիլի նորոգության ժամանակ կոնակի մասում կպցված է հետևյալները).

10 կտոր մանր թղթիկներ, որոնց վրա կան բոլորգիր գրություն:

Մի կտոր բավականին մեծ թուղթ, որի վրա կա շղագիր գրություն:

Մի կտոր բավականին մեծ թուղթ, որի վրա կա նոտրգիր գրություն:

№ 288

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թերթերը՝ 185:—**Պրակները՝** 12, յուրաքանչյուրը 16 թերթից:—**Մեծությունը՝** 24×17×2 սմ.:—**Նյութը՝** ընպիտակ հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակ-**

ներ՝ չկան:—**Վիճակը՝** լավ, սակայն պրակները չեն միացած իրարու:—**Գրությունը՝** միապուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա—3բ, 19բ, 83ա—84ա, 108բ—109ա, 144բ, 146բ—147բ, 172բ—185բ:—**Տողերը՝** 23:—**Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:—**Գիրը՝** շղագիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** անհայտ (շատ հավանաբար Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարքարանի քարտուղարը և կամ մի այլ աշխատակիցը): —**Պատվիրատուն՝** Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարքը 1912—1913 թվերին՝ Հովհաննես Արքեպիսկոպոս Արշարունին: —**Ժամանակը՝** 1912—13 թ. թ.: —**Վայրը՝** Կոստանդնուպոլիս:—**Ծանոթություն՝** սույն շատ արժեքավոր ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից (Դիվանատան նախկին սենյակից):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—Գերման Դեսպանին հետ տեսակցութիւնս էջ 276 (այսինքն թ. 141բ):

Թ. 3ա.—Մայրաքաղաքիս օտար Դեսպանատանց հետ կատարուած բանակցութիւնք:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Թիւ 3: Հատոր I:

Թ. 2ա.—Հատոր I:

(Սույն ձեռագրի մասին տեսնել «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Բ—Գ—Դ և Ե—Զ—Է զույգ միացյալ համարներում, որտեղ լույս է տեսել նաև բնագրի առաջին 45 թերթերի բովանդակությունը, ինչպես նաև 128բ-ից մինչև 132բ թերթերը): Ձեռագրի մնացյալ մասը լույս է տեսել «Բանբեր Հայաստանի արխիվների»* հանդեսում, 1968 թ. № № 2 և 3-ում: Սույն մասը հետագայում արտատպվել է Բեյրութի «Զարթոնք» օրաթերթում, 1969 թ. ապրիլի 18-ից մինչև հունիսի 27 համարներում:

№ 289

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 54×49 . 3 սմ.: —**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապուն:—**Դատարկ թղթերը՝** չկան: —**Տողերը՝** 16: —**Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը՝** երկաթագրի մի տարբերակը:—**Զարդագրություն՝** կան երեք հատ բավականին գեղեցիկ գունավոր ծաղկավոր ճյուղեր, ինչպես նաև երեք հատ հասարակ գունավոր զարդեր: Գրչության բոլոր բառերը սկսվում են մեծատառով, որոնք բոլորն էլ ներկված են զանազան գույներով:—**Գրիչը՝** Ն. Մինասյան:—**Պատվիրատուն՝** Փարիզի Մխիթարյան Մուրատ Ռափայելյան վարժարանի նախկին աշակերտաց Մարսիլիո միությունը:—**Ծաղկողը՝** նույն ինքը գրիչը՝ Ն. Մինասյան:—**Ժամանակը՝** 8 ապրիլի 1956 թ.:—**Վայրը՝** Մարսիլիա (Ֆրանսա):—**Ծանոթություն՝** 1956 թ. Ֆրանսայից Մայր Աթոռ է բերված Վեհափառ Հայրապետի միջոցով: Մայր Աթոռի Ձեռագրատունը 1965 թ. ապրիլի 15-ին ստացած է Հոգևոր ճեմարանի գրադարանից ձեռամբ Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տն. Տն. Վազգէն Ա-ին
Արբոյ Աթոռոյն Էջմիածնի
Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց
Ցաւուր անմոռաց այցելութեան իրոյ
Ի հայաշատ ոստան Մարսիլիոյ,
Միութիւն նախկին աշակերտաց
Մուրատ Ռափայէլեան վարժարանի,
Հաւատարիմ ջանակիր պատգամաց
Համազգային եղբայրութեան
Լուսանորոգն մեծի Մխիթարայ Սեբաստացւոյ.
Ջիղձս մաղթանաց իւրոյ,
Կենդանութեան և արևշատութեան,
Ի յորդերանդն սրտէ
Ջօնէ ընծայէ:

Մարսիլիա—18 ապրիլ 1956—Ն. Մինասեան

№ 290

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 71 . 3 × 55 . 1 սմ.: —**Նյութը՝** դեղնած, կեղտոտած և տեղ-տեղ հաստ դիմացկուն թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միապուն: —**Տողերը՝** ընդամենը 55 տող:—**Գծումները՝** արված են մատիտով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** կոնդակն ունի շատ գեղեցիկ զարդագրություն և մանրանկարչություն: Սկզբում կա ընդամենը մի հատ ծաղկագիր (Գ տառը), շատ մեծ՝ 10×9 սմ. չափերով: Ինքը շատ գեղեցիկ է: Գործածված է մեծ մասամբ երկու գույն՝ դեղին և մոխրագույն: Կոնդակի վերևի մասում, կենտրոնում, նկարված են չափազանց գեղեցիկ երկու կանացի հրեշտակներ, որոնք գտնվում են օդում: Մեկ ձեռքով բռնած են մեկական կանաչ ճյուղ, իսկ երկրորդ ձեռքով միասին բռնած են մի հատ մեծ ծաղկեպսակ, որի մեջ տպված է Գևորգ Դ. Կաթողիկոսի մեծ կնիքը: Կնիքի տրամագիծը 55 միլիմետր է: Կնիքի կենտրոնում նկարված է Էջմիածնի վանքը, Արարատ լեռը, որի գագաթին Նոյան տապանը կա, Աստված, Հիսուս մանուկ և Գրիգոր Լուսավորիչ: Ծաղկեպսակի ներքևի մասից կապված է մի երկար ժապավեն, որ կախված է դեպի վար: Վերոհիշյալ նկարից քիչ ցածր կոնդակի աջակողմյան մասում նկարված է Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, ամպերի վրա կանգնած: Ամպերի երկու կողմերում էլ օդի մեջ կան երկու հրեշտակներ, որոնք մեկ ձեռքով բռնած են մեկական գավազան (մեկը վարդապետական, իսկ մյուսն էլ եպիսկոպոսական), իսկ երկրորդ ձեռքով էլ միասին բռնած են մի սպիտակ շոր, որի վրա գրված է «Կաթողիկոս» բառը: Ամբողջ կոնդակն առնված է ոսկեգույն շրջանակի մեջ:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Գևորգ Դ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց։—**Ծաղկողը՝** անհայտ։ —**Ժամանակը՝** 1878 թ.։—**Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք։ —**Ծանոթություն՝** սույն ձեռագիր կոնդակը ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի միջոցով, 1965 թ. ապրիլի 15-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոնդակի վերևի Կաթողիկոսական կնիքը՝ Գէորգ Կաթողիկոս Ամ(ենայն) Հայոց և Ծայրագոյն Պատրիարք Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի։

Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա։ ՌՃԺԵ (1866 թ.)։

ԿՈՆԴԱԿԻ ՏԵՔՍՏԸ

Գ(ծաղկագիր)էորգ ծառայ Քրիստոսի և անհասանելի կոմօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և (մեծ չափսի երկաթագիր, ոսկեգույն) Կաթողիկոս (ավելի փոքր երկաթագիր, կարմիր, գրված տողից երկու սանտիմետր ավելի վեր, հրեշտակների բռնած շորի վրա)—(հետագա տողերը գրված են նոտրգրով և սև թանաքով)—ամենայն հայոց՝ և ըստ տնտեսութեան Հօրն երկնաւորի և ընտրութեան Հոգւոյն սրբոյ որոշեալ ի յաջորդութիւն առաջին Աւետարանչաց աշխարհիս մերոյ սրբոց Առաքելոցն Թադէի և Բարթուղիմեայ՝ և ի գահակալութիւն անհամեմատ Առն Աստուծոյ Սրբոյն Գրիգորի Պարթևի երկրորդ լուսաւորչի հոգւոց և աբանչելի հրեշտակի Արարատեան Առաքելական Կաթողիկէ Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի՝ որ ի վաղարշապատ առ հովանեաւ բարձու լերինն Մասեաց, ուր տապան արդարոյն Նոյի հանգեաւ նշանակ անդրանիկ Եկեղեցւոյն Աստուծոյ, ուր առաջինն սեղան հաշտութեան ուղղեցաւ յողջակէզ պատարագի արդարոյն ի հոտ անոյշ հոտոտեալ Աստուծոյ ուխտ եդ և հաշտեցաւ ընդ մարդկան։

Շնորհք, խաղաղութիւն և ողորմութիւն Աստուծոյ առ սիրելի եղբարսդ իմ, որ յետ եկանելոյ իմոյ յաշխարհէս յայսմանէ ընտրութեամբ և զօրութեամբ Հոգւոյն ունիք ժառանգել զԱթոռ երանելի Սրբոց Առաքելոց՝ զառաքինաշաւիղ հարց յաջորդաց նոցա և զիմոյ նուաստութեանս որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց յաջորդ և գահակալ ընտրելոցն այնոցիկ՝ որ զհոգի և զմիտս Քրիստոսի և զհրեղէն լեզու Սրբոյ Հոգւոյն ունէին ի բանս իւրեանց, որք յօրինակ հաւատացելոց ի մարմնի իրրև զանմարմինս քաղաքավարեալ, և յերկրի ի մէջ կամակոր և խեղաթիւր ժողովրդոց իրրև զլուսաւորս ի հաստատութեան երկնից փայլեցան, որք զերևելի երկիրս լրիւ իւրով ընդ ստիւք իրրև զկղկղանս ունելով, և զանձանց ինչ ոչ խնդրելով ի թևս Հոգւոյն միշտ յաներևույթն և յաւիտենականն վերամբարձան յամենայնի միայն զփառս Եկեղեցւոյն Քրիստոսի և զխաղաղութիւն ազգիս խորհելով՝ արեամբ չափ նահատակեալ ընդդէմ տարերց աշխարհիս, թողին զաւանդս պատուականս և զազգի ազգի յիշատակս անմահս, և քանզի լի էին յուսով անմահութեան ընդ հուր և ընդ սուր անցեալք ընդ երկինս մտին ի քաղաքացութիւն սրբոց և գրեցան անուանք նոցա ի դպրութիւն կենաց անմահ գառինն՝ կալով և մնալով կենդանի յԵկեղեցւոջ։

Արդ հայեցեալ իմ յելս գնացից երանելեացն ընդ բազում պարտուք տագնապէր և ճմլէր անձն իմ յորոց փութացեալ ճողոպրել զանձն՝ զանց զտկարութեամբ իմով և զանձեռնտուութենէ ժամանակիս արարեալ, ոչ վհատեալ լքայ թէ ոչ ոք է որ համաշունչ և ընտանեբար հոգայցէ ընդ իս զտնտեսութենէ Առաքելական Սրբոյ Աթոռոյս, և ոչ իսկ զկին ընտանի ապատամբութեան որ յօտարաշունչ ազդեցութեան դրդեալ զօրանայր յազգայինս ոմանս ի Կ. Պոլիս զՍսոյն ասեմ և զԱղթամարայն խորհելով զխորհուրդ վտանգաբեր, և զփառս հարսին լուսոյ և զերեսս որդւոց Արևելից հնարէր ճգնէր յԱրևմուտս կոյս դարձուցանել և փեռեկտումն հաւուցանել միութեան Սրբոյ Եկեղեցւոյս, ոչ երբէք կարաց թուլացուցանել զոգի, իմ, այլ վառեալ ի սէր ազգի և Եկեղեցւոյ՝ օգնականութեամբ Աստուծոյ ի դիմի հարեալ միայնակ ամենայն հնարից խորամանկ օձին՝ կէտ եդեալ նպատակի մտաց իմոց անդուլ աշխատութեամբ և անընմբերելի դժուարութեամբ յաղթել թշնամեաց Եկեղեցւոյ մերոյ, և զանկեալ վիճակ նորին բարձրացուցանել հոգալով զկարևորացն և զանհրաժեշտ պիտոյից ի հաստատութիւն և ի փառս Մօրս Լուսոյ Սրբոյ Էջմիածնի և համայն լրութեան ազգիս ըստ իմում կարի։

Վասն որոյ յօրէ մուտ գործելոյ իմոյ ի համազգական Աթոռս՝ ձեռն արկի ըստ ներելոյ հանգամանաց անձանձրոյթ սիրով բարւոքել զվիճակ մայր վանիցս ըստ ամենայն մասանց և բարեկարգել զազգային հոգևոր դպրոցս, զվանորայս, զեկեղեցիս և զեկեղեցականս Հայաստանեայց աշխարհի, բանալով ի նորոյ զրազում նախակրթական դպրոցս ի քաղաքս և ի գիւղս, զկանոնս վասն իւրաքանչիւրոցն հաստատեալ, և զոմանս ի քայքայեալ մենաստանաց ի դառնաղէտ արկածից հետաւոր ժամանակաց վերականգնեալ նորոգմամբ և դպրոցս ի նոսին հաստատելով, և այլն և այլն։ Սակայն ի վերայ այսր ամենայնի ոչ կարեմ բնաւ պարծիլ՝ թէ զամենայն կարևոր պիտոյս Սրբոյ Եկեղեցւոյ և ազգի գլխաւորեալ և լցուցեալ իցեմ, քանզի օգտաւէտ ձեռնարկք իմ լաւ ևս ի լոյս հանեալ զգացուցին ինձ զայլ բազմատեսակ ազգային պիտոյս, որոց կատարմանն փոյթ ունել ինձ անշուշտ պարտ է խոհեմաբար տակաւ առ տակաւ Տեառն օժանդակութեամբ։

(Շարունակելի)